# ՍԵԲԱՍՏԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱՐԱՆՆԵՐԸ ԵՎ ՄԱՄՈՒԼԸ XIX Դ. ՎԵՐՋԻՆ – XX Դ. ՍԿԶԲԻՆ

ՍԱՀԱԿՅԱՆ Ա. Գ.

*Սեբաստիայում առաջին տպարանները հիմնվել են XIX դարի 70-ական թթ.: 1875 թ. վերջին Սեբաստիայի Կովտուն գյուղի բնակիչ Անդրանիկ Վարդանյանը, որը մինչ այդ Կ. Պոլսի «Հայրենիք» թերթի խմբագիրն էր, տպագրական սարք է բերում Սեբաստիա և հիմնադրում տպարան, որտեղ 1876 թ. մարտի 19-ից սկսում է հրատարակել «Սվազ» անունով թերթը[1], որն ուներ հայերեն և թուրքերեն բաժիններ, և այդ ձևով լույս ընծայվեց 3 համար: 1876 թ. ապրիլի 7-ին թուրքական կառավարությունը «Սվազի» հայերեն բաժինը վերածում է հայատառ թուրքերենի: 1898 թ. հայերենը ամբողջովին վտարվում է, «Սվազը» դառնում է թուրքերեն կառավարական թերթ:*

*XIX դ. 70-ական թթ. Սեբաստիայում գոյություն ուներ անանուն մի թերթ, որը տարածվում էր ձեռագիր վիճակում: Սեբաստիայում 1878 թ. առաջ եղել է ճգնավորների մի խումբ, որոնք, լեռներ ու վանքեր քաշված, շուտով դառնում են բողոքականներ: «Մասիս» թերթը նրանց մասին գրում է. «Բոլորին հայտնի է, որ ճգնաւոր կոչուածները ծոյլ եւ անգործ երիտասարդներ ու պատանիներ են, որոնք կրօնը դիմակ ըրած՝ հայ ժողովուրդը տգիտական նախապաշարման, բողոքականութեան, մոլեկրօնութեան մատնելու և նորա ազգային ու ընկերական զգացումն մարելու նպատակին կը ծառային»[2]: Ահա այս ճգնավորների դեմ, ժողովրդին լուսաբանելու նպատակով, Սեբաստիայում գաղտնի մի թերթ է խմբագրվում և մինչև 1879 թ. հուլիս ամիսը 20-25 համար ձեռագիր վիճակում լույս ընծայվում. դրանց մեծ մասը ապացուցում էր «ճգնավորների՝ մարդկության բեռ և վնասակար լինելը», ինչպես նաև ժողովրդին զգուշացնում էր չընկնել նրանց թակարդի մեջ[3]:*

*Տպագրական գործը և մամուլը առաջընթաց ապրեցին XX դ. սկզբին: Վերոհիշյալ Անդրանիկ Վարդանյանի զավակը՝ Հայկ Վարդանյանը, հոր մոտ սովորելով տպագրական գործը, հետագայում հիմնում է տպարան՝ հոր հիշատակը վառ պահելու համար: Այստեղ լույս է տեսնում «Անդրանիկ» շաբաթաթերթը (առաջին համարը՝ 1909 հունվարի 24-ին)[4], որի տիտղոսաթերթին գրված էր. «Անդրանիկ, գաւառական լրագիր շաբաթաթերթ. Ազգ. քաղաքական, գրական, տնտեսական,*

---

[1] *Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 193, ց. 1, գ. 1108, թ. 175 շրջ., տե՛ս նաև* **Առաքել Պատրիկ,** *Պատմագիրք Յուշամատեան Սեբաստիոյ և գաւառի հայութեան, հ. Ա, Պէյրութ, 1974, էջ 439:*

[2] *Մասիս, Կ. Պոլիս, 1879, N 2389:*

[3] *Նույն տեղում:*

[4] *ՀԱԱ, նույն տեղում, թ. 176 շրջ, տե՛ս նաև* **Առաքել Պատրիկ,** *նշվ. աշխ., էջ 395:*

*երկրագործական, բանասիրական, առեւտրական»[5]: Այն նպատակ է ունեցել «թուրք, հայ և հայրենակից ազգերի եղբայրակցության սկզբունքի արձագանքը հանդիսանալ»[6]: Թերթը լույս է տեսել 4 էջով, տպագրվել է 1909-1911 թթ. ընթացքում և տվել շուրջ ութ տասնյակ համար[7]: Դադարեց տպագրվելուց 1911 թ. հունիս-հուլիս ամիսներին՝ Հայկ Վարդանյանի մահվան պատճառով:*

*1910 թ. օգոստոսի 13-ին Սեբաստիայում հիմնադրվում է Կարապետ Պարսամյանի «Հողդար» տպարանը, որտեղ հրատարակվել է «Հողդար» թերթը. առաջին համարը լույս է տեսել 1910 թ. հոկտեմբերի 27-ին: Խմբագիրը և տնօրենը Կ. Պարսամյանն էր: Այն նույնպես 4 էջանոց և երկսյուն թերթ էր: Սկզբում այնտեղ ակնառու էին խմբագրական թերությունները, և դժվարընթեռնելի էր, սակայն որակը գնալով բարելավվում է: 1910 թ. ընթացքում լույս է տեսնում 50 համար, իսկ 1911 թ՝ 35 համար[8]: «Հողդարին» աշխատակցել են Դ. Վարուժանը, բանասեր Կ. Գաբիկյանը, Հ. Թլկատինցին և այլք:*

*1913 թ. ապրիլի 27-ին Կ. Պարսամյանը «Հողդարը» վաճառում է ՀՅԴ Սեբաստիայի ճյուղին: Կազմվում է խմբագրական մարմին: Թերթի արտոնատեր է դառնում Մ. Փոլատյանը[9]: Մեկ-երկու համար լույս ընծայվելուց հետո «Հողդարի» ծավալը կրկնապատկվում է: 1914 թ. սեպտեմբերի 14-ից տիտղոսաթերթը փոփոխության է ենթարկվում, և այն սկսում է կոչվել «Հողդար, շաբաթաթերթ հասարակական, քաղաքական»[10], 1914 թ. ընդհանուր զորակոչի հետեվանքով թերթը դադարում է հրատարակվելուց:*

*Հետաքրքրական է, որ Կ. Պարսամյանը, վաճառելով «Հողդարը», գնում է Կ. Պոլիս և վերադառնում՝ իր հետ բերելով 3 տպագրական գործիքներ, 2-ը՝ ձեռքով և 1-ը՝ ոտքով աշխատելու համար: Այնուհետև հիմնադրում է «Կաբիրա» տպարանը: Այստեղ նա պատրաստվում է հրատարակել «Կաբիրա» թերթը, բայց նյութական միջոցները չեն բավականացնում դա իրագործելու: «Կաբիրա» տպարանում լույս են տեսել տարբեր լեզուներով գրքեր, առևտրական նյութեր և այլն: Այսպես, այստեղ տպագրվել են Հայկ Սրապյանի՝ «Ինչ է էսպերանտոն» (32 էջ), Տիգրան Բոլատյանի՝ «Յոթնաղի Քնարը» (68 էջ), Միհրան Իսպիրյանի «Գրելու արվեստը» դասագիրքը (120 էջ), Երվանդ Վառեկյանի «Բառգրքույկ հանքանվանց» աշխատանքը (24 էջ), նույնի՝ «Բառգրքույկ ստուգաբանականը» (52 էջ), Սենեքերիմ Պալյոզյանի «Հայ լեզվի անսխալ գրելու միջոցը» (24 էջ) աշխատանքները[11]:*

*XIX դ. վերջին և XX դ. սկզբին սեբաստահայ մամուլի զարգացման գործում իրենց համեստ ներդրումն են ունեցել նաև խմորատիպ որոշ հրատարակություններ:*

---

[5] *ՀԱԱ, թ. 176 շրջ:*

[6] *Նույն տեղում:*

[7] *Արխիվային փաստաթղթում այդ թիվը հասնում է 85-ի (տե՛ս ՀԱԱ, նույն տեղում), իսկ Առաքել Պատրիկի գրքում այդ թիվը հասնում է 88-ի (***Առաքել Պատրիկ***, նշվ. աշխ., էջ 395):*

[8] **Առաքել Պատրիկ,** *նշվ. աշխ., էջ 393:*

[9] *ՀԱԱ, թ. 177 շրջ:*

[10] *Նույն տեղում: Նախնական «Հողդարի» տիտղոսաթերթի մասին տեղեկությունները բացակայում են:*

[11] **Առաքել Պատրիկ,** *նշվ. աշխ., էջ 394-395:*

Դրանցից էին. 1869 թ. ՝ «Զայն Սեբաստիո», 1870 թ. ՝ «Բատ», «Մամուլի զանգ», 1905 թ. ՝ «Կետ», 1910 թ. ՝ «Նշդրակ», 1913 թ. ՝ «Աղավնի» թերթերը[12]:

«Նշդրակը» գավառային ամսաթերթ էր, որի հիմնադիրը «Արամյան» վարժարանի ուսանողական միությունն էր: Առաջին համարում իրենց հոդվածներն էին զետեղել Դ. Վարուժանը ՝ «Ցեղին արվեստը», Կ. Գաբիկյանը ՝ «Հայոց նշանագրերը» և այլք[13]: Այս թերթի միայն 5 համարների մասին է հայտնի: «Աղավնին» խմորատիպ գրական ամսաթերթ էր: Այն հրատարակվում էր Սեբաստիայի «Հիսուսյան» վարժարանի հայ աշակերտների կողմից և ուներ աշակերտական բովանդակություն:

XX դ. սկզբին Սեբաստիայում լույս են տեսնում ընդամենը 2 անուն թուրքերեն թերթեր ՝ «Վիճտանը», որը սկսել է հրատարակվել 1909 թ. հուլիսի 13-ին, Խալիդ Զնդեթ բեյի կողմից, և 1910 թ. ՝ Սեբաստիայի իթթիհատ կուսակցության «Կրզըլ-ըրմաքը»[14]: Երկուսն էլ 1913 թ. ամռանը դադարում են հրատարակվելուց: 1913 թ. հոկտեմբերին «Կրզըլ-ըրմաքը» վերահրատարակվում է[15]:

Զուգահեռներ անցկացնելով Սեբաստիայի հայկական և թուրքական մամուլի միջև ՝ կարելի է ասել, որ XIX դ. վերջին և XX դ. սկզբին սեբաստահայ մամուլը և տպագրական գործը գտնվում էին անհամեմատ ավելի բարձր դիրքի վրա, քան թուրքականը:

Տպագրական գործը որոշակիորեն զարգանում էր նաև Սեբաստիայի վիլայեթի Ամասիայի և Թոքաթի սանջակներում: XX դ. սկզբին Ամասիայում հրատարակվում էր «Ապառաժ» թերթը ՝ (1911 թ. հունվարի 1-ն ՝ իբրև շաբաթաթերթ), որի խմբագիրն էր Լևոն Լանիսը: Այն հրատարակվել է մինչև նոյեմբեր ամիսը: Սկզբում եղել է մեծածավալ, այնուհետև էջաքանակը փոքրացել է: Այստեղ իրենց հոդվածներն են զետեղել Կայծունին, Արսլանյանը, Հ. Բագրատունին, Կ. Մկրտչյանը, Ա. Դարբինյանը, Դ. Վարուժանը և ուրիշներ[16]: Պետք է նշել, որ շուտով լույս ընծայվեց նաև «Ապառաժ» ամսաթերթը, որտեղ իրենց բազմաբնույթ հոդվածներով հանդես եկան Դ. Վարուժանը, Ն. Խորանյանը, Կ. Մկրտչյանը, Գ. Հ. Կյոզյանը և ուրիշներ[17]: Նույն ժամանակահատվածում Ամասիայում լույս էր տեսնում նաև «Ամասիա» կիսամսյա հանդեսը, որի խմբագիրն էր Մ. Իփեքճյանը, իսկ արտոնատերը ՝ Հ. Թափիփյանը: Այստեղ հոդվածներ էին տպագրում Ա. Մանկունին, Մ. Վարժապետյանը, Գ. Աթեշյանը, Ա. Գնունին, Մ. Իփեքճյանը, Հ. Մեղմունին, Ս. Աղքատիկյանը, Մ. Բրուտյանը Հ. Գմբեթյանը և ուրիշներ: Ցավոք,

---

[12] Նույն տեղում:

[13] ՀԱԱ, նույն տեղում, թ. 176 շրջ.:

[14] Նույն տեղում, թ. 178 շրջ.:

[15] Նույն տեղում:

[16] **Սիմոնեան Գ.,** *Յուշամատեան Պոնտական Ամասիոյ, Նիկոսիա, 1966, էջ 552:*

[17] Նույն տեղում:

Ամասիայի մամուլի մասին շատ տեղեկություններ չկան[18]:

Տպագրական գործը լավ հիմքերի վրա էր դրված վիլայեթի հյուսիսային մեկ այլ գավառում՝ Թոքաթում: Այստեղ հայերեն առաջին շաբաթաթերթը լույս է տեսել 1883 թ.՝ «Երախայրիք» անվամբ: Այն 1883-1885 թթ. կանոնավորապես հրատարակել է Թոքաթի ազգային վարժարանում ստեղծված «Սանուց» ընկերությունը, որի անդամներն էին աշակերտներ Մարտիրոս և Ավետիս Գալփագճյան եղբայրները, Մ. Հյուսիսյանը, Ռ. Հռեյանը (Հերեյան) և Հ. Գազանճյանը: Խմբագրական գործը հիմնականում կազմակերպում էր Փասպանյանը[19]: «Երախայրիքը» հրատարակվում էր գունավոր թղթով, և պայման էր դրված, որ յուրաքանչյուր շաբաթ փոխվում էր թղթի գույնը: Թերթի ճակատային հատվածում «Երախայրիք» անունը գեղագրում էին Հ. Գազանճյանը և այն ժամանակներում հայտնի դերասան Ս. Հայկունին: Թերթն ուներ պարզ բովանդակություն, պարունակում էր ազգային լուրերի ամփոփում, տեղական ազգային լուրերի բաժին, երբեմն գրվում էին հոդվածներ՝ արդիական, հազվադեպ էլ՝ գրական և զվարճալի թեմաներով[20]: Երկու տարի հետո թուրքական կառավարությունը խափանեց թերթի հրատարակությունը: 1886-1908 թթ. ինչպես այս գավառում, այնպես էլ թուրքական կայսրության այլ վայրերում մամուլի ազատություն գոյություն չուներ: 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո տպագրական գործը կրկին վերսկսվեց: 1910 թ. օգոստոսին Հ. Պոյաճյանի[21] ջանքերով տպարան է հիմնվում: Նա իր հետ Կ. Պոլսից Թոքաթ էր բերել ձեռքի փոքր տպագրական սարք, ուներ նաև մի մտավորական գրաշար՝ Տիգրան Կորկոտյան անունով: Տպարանի հիմնումը ազդակ դարձավ Եվդոկիայի «Հայ առաջդիմասիրաց ակումբի» լրագիրը տպելու: Այս տպարանում 1910 թ. դեկտեմբե- րի 1-ին սկսեց հրատարակվել «Իրիս» անունով շաբաթաթերթը: Այն «Ակումբի» պաշտոնական օրգանն էր՝ արտոնությամբ իր և «Ակումբի» կողմից նշանակված խմբագրական մարմնով: Երկու համարից հետո 1910 թ. դեկտեմբերի 24-ին երրորդ համարի հրատարակումը ձախողվեց, չնայած շարվածքը պատրաստ էր: Պատճառն այն էր, որ թուրքական կառավարությունը չէր արտոնել այդ համարի հրատարակությունը[22]: Արտոնություն ստանալու համար Թորգոմ եպիսկոպոս Գուշակյանը ջանքեր գործադրեց, որից հետո Թոքաթի նոր կառավարիչ Վեզաֆ բեյը բարյացակամ գտնվեց և, վերջապես, 1911 թ. ապրիլին թերթը կրկին արտոնություն ստացավ տպագրվելու[23]: 1911 թ. ապրիլի 30-ին հրապարակ եկավ «Իրիսի» 4-րդ համարը, և այն վերածվեց կիսամսյա գավառաթերթի: Արդեն հունիսին նոր խմբագրապետ է նշանակվում բժիշկ Կ. Բյուլբյուլյանը, պատասխանատու տնօրենն

---

[18] Նույն տեղում:

[19] **Ալպոյաճեան Ա.,** Պատմութիւն Եվդոկիոյ հայոց, Գահիրէ, 1952, էջ 1013: Փասպանյանի մասին այլ տվյալներ բացակայում են:

[20] Նույն տեղում:

[21] Հ. Պոյաճյանը ծնվել է 1853 թ. Թոքաթում, ուսումը ստացել Կ. Պոլսում, 1866-1870 թթ., ապա Կ. Պոլսում և Թոքաթում աշխատել է իբրև ուսուցիչ, հետո զբաղվել է առևտրով և վերադարձել Թոքաթ՝ հիմնելով տպարան:

[22] Նույն տեղում, էջ 1015-1016:

[23] Նույն տեղում, էջ 1016:

էր Ա. Խտրյանը, իսկ Հ. Պոյաճյանը դարձյալ շարունակում էր մնալ արտոնատեր: Ի դեպ, Բյուլբյուլյանը «Իրիսում» տպագրում է բժշկական հոդվածներ, և նրա խմբագրապետության շրջանում «Իրիսը» ամենափայլուն վիճակում էր[24]: Ցավոք, 1911 թ. հոկտեմբերին, Սամսոն մեկնելու պատճառով, Բյուլբյուլյանը հրաժարվեց խմբագրապետի պաշտոնից: «Ակումբը» նոր խմբագրական կազմ և կանոնագիր է պատրաստում, որով 1912 թ. մարտի 1-ին ավարտվում է «Իրիսի» առաջին տարեշրջանը:

1912 թ. ապրիլի 15-ի առաջին համարի ճակատային հատվածում գրված էին արտոնատիրոջ՝ Հ. Պոյաճյանի և խմբագրապետ Պ. Պոնտացու անունները, իսկ վերջին էջին՝ պատասխանատու տնօրեն Ա. Խտրյանի անունը: Քանի որ 1912 թ. օգոստոսի 1-ին Պ. Պոնտացին մեկնել էր Կ. Պոլիս, իբրև փոխխմբագրապետ և արտոնատեր հանդես է գալիս Հ. Պոյաճյանը: Գրեթե միշտ, մյուս աշխատակիցների անփութության կամ այլ պատճառներով, վերջինս կրում էր աշխատանքի ողջ ծանրությունը: «Իրիսը» տպագրությունը շարունակում է մինչև 1912 թ. հոկտեմբերի 15-ը և դադարում է, քանի որ կուսակցական պառակտումը մտել էր նաև «Ակումբի» մեջ[25]:

Այսպիսով, «Իրիսը» գավառի լավագույն թերթն էր, որն իր գոյության համար պարտական էր Հ. Պոյաճյանին, որն անխոնջ շարունակել էր գործը մինչև վերջ:

Բացի «Իրիսից», Հ. Պոյաճյանի տպարանը հրատարակել է Ռ. Ասայանի «Փոքրիկ հերոսը», «Հայ տառապյալները», «Թուրք սպան», Հ. Պոյաճյանի «Պատվո զոհեր», «Եղեռնային հասանիք», «Մարող կյանքեր», Տ. Կորկոտյանի «Հիշատակի ծաղիկները» ստեղծագործությունները, ինչպես նաև տեղի «Հիսուսյան» վարժարանի հայտարարագիրը[26]: 1915 թ. տեղահանությունից հետո Հ. Պոյաճյանի մասին այլ տեղեկությունների չենք հանդիպում, իսկ թուրքերը, տիրացան պատրաստի տպարանին:

1914 թ. Թոքատում սկսել է գործել Տիգրան Թեոմյուրյանի տպարանը: Նա ծնվել է 1886 թ. Եվդոկիայում, նախնական կրթությունը ստանալուց հետո ուսանել է Արմաշի դպրեվանքում, որի լրիվ դասընթացը ավարտելուց հետո վերադարձել է հայրենիք և աշխատել որպես ուսուցիչ: Իբրև ուսուցիչ աշխատել է նաև Էրպաայում: Հընչակյան կուսակցության անդամ էր: Նրա տպարանում հրատարակվել է ֆրանսերենի ուսուցիչ Կ. Մեսրոպյանի հեղինակած ֆրանսերենի քերականությունը՝ "Me'thode practique" («Գործնական մեթոդ»)[27]: Այս տպարանը գոյատևեց հազիվ մեկ ու կես տարի: 1915 թ. Տիգրան Թեոմյուրյանը տարագրության զոհ դարձավ:

---

[24] Նույն տեղում:

[25] Նույն տեղում, էջ 1017:

[26] Նույն տեղում, էջ 1018:

[27] Նույն տեղում, էջ 1018-1019:

## АРМЯНСКАЯ ПЕРИОДИКА И ТИПОГРАФСКОЕ ДЕЛО В ПРОВИНЦИИ СЕБАСТИЯ В КОНЦЕ XIX – НАЧАЛЕ XX ВВ.

СААКЯН А. Г.

**Резюме**

Несмотря на преграды, чинимые турецким правительством, в провинции Себастия открывались армянские типографии и издавались газеты и книги, причем уровень армянской периодики во многом превосходил турецкие периодические издания. Здесь были основаны типография Айка Варданяна, типография “Охдар” Карапета Парсамяна, издававшие газеты “Андраник”, “Охдар” и т. д. В провинциях Амасии и Токата также было налажено типографское дело: в Амасии издавалась газета “Апараж”, а в Токате – “Ерахайрик” и “Ирис”.